Արագ փաստեր 5

Կալիֆորնիայի վարորդական իրավունքի վկայականի նկատմամբ ներկայացվող պահանջներ

Ի՞նչ է իրենից ներկայացնում Կալիֆորնիայի վարորդական իրավունքի վկայականը (DL)?

Կալիֆորնիայի վարորդական իրավունքի-ը քարտ է, որը թույլ է տալիս անհատին վարել տրանսպորտային միջոց: վարորդական իրավունքի-ը ներառում է ձեր լրիվ իրական անունը, ծննդյան ամսաթիվը, փոստային հասցեն, ստորագրությունը, լուսանկարը և ֆիզիկական նկարագրությունը: Այս քարտը պետք է ձեր մոտ լինի ցանկացած ժամանակ, երբ դուք տրանսպորտային միջոց եք վարում: վարորդական իրավունքի-ի համար դուք կարող եք դիմել ավտոտրանսպորտային միջոցների վարչության (*Department of Motor Vehicles*, DMV) տարածքային գրասենյակ: վարորդական իրավունքի-ի բնօրինակի, նորացման և կրկնօրինակի համար առկա է դիմումավճար:

Որո՞նք են վարորդական իրավունքի դասակարգումները?

Եթե դուք 18 տարին լրացած այցելու եք Կալիֆորնիայում և ունեք ձեր նահանգ կամ երկրի կողմից տրված վավերական վարորդական իրավունքի, դուք կարող եք վարել տրանսպորտային միջոց այս նահանգում առանց ստանալու Կալիֆորնիայի վարորդական իրավունքի, քանի դեռ ձեր կողմից կողմից տրված վարորդական իրավունքի-ն ուժի մեջ է:

Եթե դուք դարձել եք Կալիֆորնիա նահանգի բնակիչ, ձեզ անհրաժեշտ է ստանալ Կալիֆորնիայի վարորդական իրավունքի 10 օրվա ընթացքում: Բնակությունը հաստատվում է Կալիֆորնիայի ընտրություններում քվեարկելով, բնակչի ուսման վարձ վճարելով, սեփականատիրոջ գույքահարկից ազատման, կամ ցանկացած այլ արտոնությունների կամ նպաստների համար հայտադիմում ներկայացնելով, որը, որպես կանոն, չի տարածվում բնակիչ չհանդիսացողների վրա:

վարորդական իրավունքի-ի համար դիմելիս, առկա են 2 տեսակի դասակարգում՝ առևտրային և ոչ առևտրային: Յուրաքանչյուր տիպի վարորդական իրավունքի-ում, դուք կարող եք ընտրել ձեր վարորդական կարիքներին համապատասխան կարգ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի տեսակը, որը ցանկանում եք վարել:

Առկա են վարորդական իրավունքի-ի 4 ոչ առևտրային դասակարգում՝

- Հիմնական վարորդական իրավունք (C կարգ)
  - Անձնական օգտագործման ստանդարտ տրանսպորտային միջոց կամ բեռնատար՝ Կալիֆորնիայի ճանապարհներին վարելու համար:
- Մոտոցիկլ (կարգ M1 կամ M2)
  - 2-երկանիվ մեխանիկական տրանսպորտային միջոց:
- Ճանապարհորդական կցասայլ/հնգանիվ (ոչ առևտրային կարգ A)
  - Ավելի քան 15,000 ֆունտ ընդհանուր քաշով տրանսպորտային միջոց (GVWR) կամ կցասայլ ավելի քան 10,000 ֆունտ քաշով ընդհանուր քաշով տրանսպորտային միջոց, երբ տարհանումը փոխհատուցման համար չէ:
- Շարժական տուն/տուն անիվների վրա (ոչ առևտրային կարգ B)
  - Ավելի քան 40 ոտնաչափ, բայց ոչ ավելի, քան 45 ոտնաչափ, թույլտվությամբ:

ՇԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Բոլոր ոչ առևտրային վարորդական իրավունքի դասակարգերումները մատչելի են որպես REAL ID-ին համատեղելի կամ անհամատեղելի դաշնային վարորդական իրավունքի քարտ:

Առևտրային վարորդական իրավունքի-ը վկայական է տրված դաշնային օրենսդրությանը համաձայն, որը թույլ է տալիս անհատին վարել առևտրային տրանսպորտային միջոց: Առկա են առևտրային վարորդական իրավունքի 3 կարգ

- Առևտրային A
  - Տրանսպորտային միջոցների ցանկացած իրավական միավորում 26,001 ֆունտ համախառն (GCWR) կամ ավելի քաշով, պայմանով, որ տարհանվող տրանսպորտային միջոցի (ների) համախառն քաշը գերազանցում է 10,000 ֆունտը:
- Առևտրային B
  - Ավելի քան 26,000 ֆունտ ընդհանուր քաշով տրանսպորտային միջոց քաշով ցանկացած տրանսպորտային միջոց կամ նման ցանկացած տրանսպորտային միջոց, որը տարհանում է 10,000 ֆունտ ընդհանուր քաշով տրանսպորտային միջոց քաշը չգերազանցող տրանսպորտային միջոց:
  - Ավելի քան 6,000 ֆունտ քաշով 3-լիսեռանի տրանսպորտային միջոց:
- Առևտրային C
  - Ցանկացած C կարգի տրանսպորտային միջոց մեկ կամ մի քանի հետևյալ թույլտվություններով՝:
    - վտանգավոր նյութերի (HazMat):
    - Ուղևորափոխադրամիջոց (PV):
    - ցիստեռնով փոխադրամիջոց (TV):

ՇԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: բոլոր առևտրային վարորդական իրավունքի կարգերը հասանելի են որպես REAL ID-ին համատեղելի կամ անհամատեղելի դաշնային վարորդական իրավունքի քարտ:

Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչ կարգի և պահանջների վարորդական իրավունքի-ի համար դուք կարող եք դիմել, տե՛ս Կալիֆորնիայի վարորդի ուղեցույցը կամ Կալիֆորնիայի վարորդի առևտրային ձեռնարկը *(California Commercial Driver Handbook)*:

Քարտի լրացուցիչ նշումներ

- REAL ID-ին համատեղելի վարորդական իրավունքի՝
  - Համապատասխանում է դաշնային պահանջներին, թույլատրելու՝ դիմորդին օգտագործել իր վարորդական իրավունքի քարտը, որպես անձը հաստատող փաստատող՝ օդանավ նստելու, ռազմական բազաներ և բազմաթիվ դաշնային հաստատություններ մուտք գործելու համար:
  - Կալիֆորնիայի ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ի կողմից թողարկված բոլոր REAL ID-ին համատեղել ի վարորդական իրավունքի քարտերի դիմերեսի վերին անկյունում պատկերված է Կալիֆորնիայի մոխրագույն արջը և աստղ:

ՇԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: վարորդական իրավունքի-ի համար դիմող դիմորդները, Կալիֆորնիայի օրենսդիր ժողովի օրինագծի (*Assembly Bill*, AB 60)-րդ կետի համաձայն չեն կարող դիմել REAL ID-ին համատեղելի վարորդական իրավունքի քարտի համար:

- Վետերան կարգավիճակի նշում՝
  - Իրավունակ վետերանները հնարավորություն ունեն ավելացնել “VETERAN” (վետերան) բառը իրենց վարորդական իրավունքի քարտի դիմերեսին, նշելու, որ իրենք ծառայել են ԱՄՆ զինված ուժերում:
  - Այն կարող է նաև մեծ դեր խաղալ որոշակի արտոնություններ, օգուտներ կամ փոխհատուցում ստանալու հարցում՝ կապված վետերան լինելու հետ, առանց անհրաժեշտության, կրելու և թողարկելու ակտիվ աշխատանքային պարտավորություններից ազատ արձակման կամ ազատման վկայագիր (*Certificate of Release or Discharge from Active Duty*, DD Form 214):

ՇԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Դուք պետք է ներկայացնեք վետերանի կարգավիճակի վավերացման լրացված ձևը (*Veteran Status Verification Form*, VSD-001), տրված՝ վարչաշրջանի վետերանների գործերով զբաղվող գրասենյակի կողմից և ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ի տարածքային գրասենյակում վճարեք լրացուցիչ $5՝ ձեր վարորդական իրավունքի-ի վրա վետերան կարգավիճակի նշում ստանալու համար:

- Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն՝
  - Երբ դուք ավելացնում եք ձեր անունը “Նվիրիր կյանք” Կալիֆորնիայի մարդու օրգանների և հյուսվածքների նվիրատուների ռեգիստրում (Donate Life California Organ and Tissue Donor Registry), դուք օրինական կերպով թույլատրում եք ձեր օրգանների և հյուսվածքների վերականգնումը ձեր մահվան դեպքում: Ձեր վարորդական իրավունքի քարտի վրա կտպագրվի վարդագույն “DONOR” կետ:

Ի՞նչ է ինձ անհրաժեշտ՝

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Եթե դուք դիմում եք ստանալու Կալիֆորնիայի բնօրինակ վարորդական իրավունքի, վերահաստատելու Կալիֆորնիայի առևտրային վարորդական իրավունքի-ը, կամ վերափոխելու REAL ID-ին համատեղելի վարորդական իրավունքի-ով, ձեզ անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող ընդունելի փաստաթուղթ (թղթեր), ձեր ինքնությունը հաստատելու համար: Ընդունելի փաստաթուղթը լիազոր մարմնի, ինչպես օրինակ, վարչաշրջանի, նահանգային, դաշնային կամ արտասահմանյան գործակալության կողմից թողարկված փաստաթուղթ է: Դրանք ծննդյան ամսաթիվը, իրական լրիվ անունն ու ինքնությունը հաստատող բնօրինակ կամ հաստատված փաստաթղթեր են: Անձի ինքնությունը հաստատելու համար, ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ն միայն ընդունում է փաստաթղթի բնօրինակը կամ վավերացված պատճենը: ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ն չի ընդունիլուսապատճեններ, “տեղեկատվական կրկնօրինակներ”, կամ հայտարարություն անող փաստաթղթեր, “տեղեկատվական, ոչ վավեր փաստաթուղթ, ինքնության հաստատման համար”, կամ ցանկացած նմանատիպ հայտարարություն: Ձեր փաստաթուղթը (թղթեր) պետք է պարունակի/պարունակեն ձեր իսկական լրիվ անունը: ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակ ներկայացված փաստաթուղթը (թղթեր) կվերադարձվի/են ձեզ:

Ըստ վարորդական իրավունքի տեսակի, որ դուք դիմում եք, անձի ինքնությունը հաստատող ընդունելի փաստաթղթերի ամբողջական ցանկի համար այցելե՛ք **dmv.ca.gov**:

ՇԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Ժամանակավոր (անչափահաս անձի) վարորդական իրավունքի-ների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք **dmv.ca.gov**:

Լրիվ իսկական անունը

Ձեր լրիվ իսկական անունը՝ ձեր ներկայիս, ամբողջական իրավաբանական անունն է (անուն, հայրանուն, և ազգանուն), ինչպես դա երևում է ձեր ինքնության հաստատման կամ անվանափոխության փաստաթղթի (թղթերի) վրա: Եթե ձեր անձը հաստատող փաստաթղթում նշված անունը տարբերվում է ներկայացված հայտադիմումի մեջ նշված ձեր անունից, ապա դուք պետք է ներկայացնեք անվանափոխության վերաբերյալ լրացուցիչ փաստաթուղթ: Ձեր լրիվ իսկական անունը հաստատող անվանափոխության փաստաթղթերը ներառում են՝

- Որդեգրման փաստաթղթերը, որոնք պարունակում են որդեգրումից հետո ձեզ տրված պաշտոնական անունը:
- Անվանափոխության փաստաթղթերը, որոնք պարունակում են ձեր պաշտոնական անունը անվանափոխությունից առաջ և հետո:
- Ամուսնության վկայական:
- դատարանի որոշմամբ տրված ամուսնալուծության վկայականը, որը պարունակում է ձեր պաշտոնական անունը:
- Քաղաքացիական զուգընկերության կազմումը հաստատող վկայականը կամ գրանցման փաստաթուղթը:

ՇԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Եթե դուք ուղղելու կամ փոխելու եք ձեր անունը վարորդական իրավունքի-ի վրա, ապա դուք նաև պետք է ուղղեք կամ փոխեք ձեր անունը ձեր ID քարտի վրա (եթե կիրառելի է):

Սոցիալական ապահովության համարանիշ (SSN)

Եթե դուք իրավունակ եք կամ ստացել եք Սոցիալական ապահովության համարանիշ, ապա դուք պետք է ներառեք այն ձեր հայտադիմումի մեջ: Կալիֆորնիայի առևտրային վարորդական իրավունքի-ի կամ REAL ID-ին համատեղելի վարորդական իրավունքի-ի համար դիմելիս, դուք պետք է տրամադրեք ապացույց ձեր Սոցիալական ապահովության համարանիշ-ի վերաբերյալ: REAL ID Սոցիալական ապահովության համարանիշ-ի ընդունելի տարբերակների ցանկի համար, այցելե՛ք **dmv.ca.gov**: Ձեր Սոցիալական ապահովության համարանիշ-ը կստուգվի սոցիալական ապահովության ադմինիստրացիայի հետ (SSA), մինչ դուք գտնվում եք ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակում: Եթե դուք իրավունակ եք և դեռ չեք ստացել Սոցիալական ապահովության համարանիշ, ապա խնդրում ենք դիմել սոցիալական ապահովության ադմինիստրացիայի հետ: Դուք պետք է ավտոտրանսպորտային միջոցների վարչությանին ներկայացնեք ձեր Սոցիալական ապահովության համարանիշ-ը, հետագայում իրավունակ դառնալու դեպքում: Լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս սոցիալական ապահովության համարանիշ (*Social Security Number*, FFDL 8) “Արագ փաստեր” գրքույկը:

Բնակության վայրի փաստաթղթեր

Դուք պետք է ներկայացնեք Կալիֆորնիայում բնակության **1** փաստաթուղթ վարորդական իրավունքի վկայական ստանալու կամ Կալիֆորնիայի կոմերցիոն վարորդական իրավունքը թարմացնելու համար դիմելիս և Կալիֆորնիայում բնակության **2** փաստաթուղթ՝ վարորդական իրավունքի հետ համատեղելի REAL ID-ի համար դիմելիս:

Առանց ուղեկցող փաստաթղթերի, որոնք հաստատում են բնակության վայրը, ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ն չի ընդունի հայտադիմում: ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ն կընդունի լուսապատճեններ, “տեղեկատվական կրկնօրինակներ” կամ համակարգչային փաստաթղթեր՝ բնակությունը հաստատելու համար: Բնակությունը հաստատող բոլոր փաստաթղթերը պետք է պարունակեն հայտատուի ազգանունը և Կալիֆորնիայի բնակության վայրի հասցեն պետք է համապատասխանի վարորդական իրավունքի հայտում նշված բնակության վայրի հասցեին: Բնակությունը հաստատող ընդունելի փաստաթղթերի ամբողջական ցանկի համար, այցելե՛ք **dmv.ca.gov**:

Հայտադիմումի գործընթաց

վարորդական իրավունքի-ի համար դիմելիս, դուք պետք է լրացնեք վարորդական իրավունքի և նույնականացման քարտի հայտ և վճարեք որևէ արտոնագրման վճար: Ընթացիկ արտոնագրային վճարների համար, այցելե՛ք **dmv.ca.gov**: Ձեզանից պահանջվում է հանձնել գիտելիքների ստուգման թեստ, տեսողության ստուգման քննություն, լուսանկար, և, անհրաժեշտության դեպքում, տրանսպորտային միջոցի վարման թեստ:

1. Նախքան ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակ այցելելը
   - Գիտելիքների ստուգման թեստի ուսումնասիրություն: ավտոտրանսպորտային միջոցների վարչության վեբ կայքում հասանելի ուսումնասիրության նյութերը ներառում են
     - Կալիֆորնիա նահագնի վարորդի ուղեցույց (հասանելի է մի քանի լեզուներով և ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակներում):
     - Կալիֆորնիա նահանգի առևտրային ձեռնարկ (*California Commercial Driver Handbook*):
     - Նմուշ թեստեր:
     - Ճանապարհային նշանների վահանակներ:
   - Հավաքե՛ք ինքնության հաստատման, բնակության վայրի վերաբերյալ և Սոցիալական ապահովության համարանիշ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ձեզ վարորդական իրավունքի-ի համար դիմելիս:
   - 2018 թվականի ապրիլ ամսից, ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ն կսկսի էլեկտրոնային վարորդական իրավունքի-ի և ID հայտադիմումի գործընթաց: Դիմորդները հնարավորություն կունենան էլեկտրոնային հայտեր ներկայացնել՝ մինչ ավտոտրանսպորտային միջոցների վարչության այցելելը: Գրասենյակ այցելելիս անպայման վերցրեք ձեր հայտի հաստատման փաստաթուղթը:
   - ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակ այցելելուց առա/ջ նախապես գրանցվե՛ք: Գրանցումները կարող են կատարվել **dmv.ca.gov** կայքում կամ զանգահարելով 1-800-777-0133: Դուք կարող եք նաև ստուգել ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակում առկա վճարային տարբերակները:
2. Երբ դուք գալիս եք ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրասենյակ

   Ձեզ անհրաժեշտ կլինի՝
   - Ճշգրիտ վճար (ներ) ձեր հայտի համար:
   - Անձի ինքնությունը, ծննդյան ամսաթիվը, իսկական լրիվ անունը հաստատող բնօրինակ կամ հաստատված փաստաթուղթ (թղթեր):
   - Սոցիալական ապահովության համարանիշ-ը հաստատող փաստաթղթի բնօրինակ, եթե դիմում եք REAL ID-ին համատեղելի վարորդական իրավունքի-ի համար:
   - Բնակությունը հաստատող փաստաթուղթ:
   - Ցանկացած պետության կողմից նախկինում տրված ցանկացած վարորդական իրավունքի կամ թույլտվություն (եթե կիրառելի է):

     Եթե ձեր 18 տարին չի լրացել, դուք կարող եք դիմել ժամանակավոր թույլտվության/վարորդական իրավունքի-ի համար: Ի լրումն վերը նշված կետերի, ձեզ անհրաժեշտ է՝:
   - Վարորդական ուսուցումն ավարտելու վկայական կամ ընդգրկվածություն վարորդական միասնական ուսուցման/վերապատրաստման ծրագրում:
   - Ծնողի (ծնողների) /խնամակալի (խնամակալների) ստորագրությունները:

Ծանոթագրություն: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս “Ժամանակավոր արտոնագրում” (*Provisional Licensing*, FFDL 19) “Արագ փաստեր” գրքույկը:

ավտոտրանսպորտային միջոցների վարչության ներկայացուցիչը կարող է ձեզ հեռախոսահամար տալ և/կամ ուղղորդել ձեզ սպասել: Երբ ձեր հերթն է, ձեզ կկանչեն պատուհանի մոտ՝ ձեր հայտին ընթացք տալու համար:

3. Երբ ձեզ կանչում են ներկայացուցչի պատուհանի մոտ
   - Տրամադրե՛ք նախապես նշված բոլոր փաստաթղթերը: Այդ փաստաթղթերը օգտագործվում են ձեր տեղեկատվությունը ստուգելու և ավտոտրանսպորտային միջոցների վարչության գրառում կազմելու համար:
   - ավտոտրանսպորտային միջոցների վարչության ներկայացուցիչը կսկանավորի ձեր մատնահետքը: Այս մատնահետքը նաև կօգտագործվի ձեր լուսանկարի ընդունման և թեստերի անցկացման ժամանակ:
   - Ձեր տեղեկատվությունը համակարգիչ մուտքագրվելուց հետո, գանձվում է հայտի (կամ ցանկացած այլ կիրառելի վճար) վճար:
   - ավտոտրանսպորտային միջոցների վարչության ներկայացուցիչը կստուգի ձեր տեսողությունը (բերե՛ք ձեր ուղղիչ ոսպնյակներն եթե անհրաժեշտ է), և կուղղորդի ձեզ դեպի տեսախցիկ:
   - Տեսախցիկի մոտ կվերստուգվի ձեր մատնահետքը և ներկայացուցիչը կվերցնի ձեր ստորագրությունն ու լուսանկարը:

Ծանոթագրություն: Ստորագրությունը և լուսանկարը կհայտնվեն ձեր վարորդական իրավունքի-ի վրա:

4. Գիտելիքների ստուգման թեստի անցկացում

   ավտոտրանսպորտային միջոցների վարչության-ն իրականացնում է գիտելիքների ստուգում, պարզելու՝ թե դիմորդը հասկանում է ճանապարհային երթևեկության օրենքներն ու կանոնները: Կախված վարորդական իրավունքի տեսակից, որի համար դուք դիմում եք, կարող է պահանջվել հանձնել գիտելիքների ստուգման ավելի քան մեկ թեստ (օրինակ, մոտոցիկլի կամ առևտրային վարորդական իրավունքի):
   - Գիտելիքների ստուգման թեստը կարող է իրականացվել համակարգչով (սենսորային էկրանով թեստ), տարբեր լեզուներով, կամ որոշ դեպքերում, թղթային կամ աուդիո տարբերակով:
   - Թեստը ավարտելուց հետո, հետևե՛ք ավտոտրանսպորտային միջոցների վարչության ներկայացուցչի ցուցումներին:
   - Սենսորային էկրանով անցկացվող թեստերը գնահատվում են ավտոմատ եղանակով: ավտոտրանսպորտային միջոցների վարչության ներկայացուցիչը կգնահատի թղթային և աուդիո տարբերակով թեստերը:
   - Չե՞ք անցել: Մի՛ անհանգստացեք: Դուք կարող եք կրկնել այս քայլը: Նախքան նորից թեստ հանձնելը, ուսումնասիրե՛ք Կալիֆորնիա նահանգի վարորդի ուղեցույցը կամ Կալիֆորնիայի նահանգի վարորդի առևտրային ձեռնարկը (*California Commercial Driver Handbook*): Նորից հանձնելու համար, ժամանակավոր դիմորդները պետք է սպասեն 1 շաբաթ:
   - Եթե 3 փորձից հետո դուք չեք անցնում գիտելիքների ստուգման թեստը, ապա դուք պետք է նորից սկսեք հայտի գործընթացը:

Ծանոթագրություն: Դուք չեք կարող վարել, եթե չունեք վավեր փաստաթուղթ, որը ձեզ վարելու իրավունք է տալիս:

5. Ի՞նչ է տեղի ունենում, երբ անցնում եք գիտելիքների ստուգման թեստը:
   - Գիտելիքների ստուգման թեստն անցնելուց հետո, ձեզ անհրաժեշտ է վերադառնալ պատուհան, ձեր արտոնագրման փաստաթուղթը ստանալու համար: Ստուգե՛ք արտոնագրման փաստաթղթի վրա տպագիր բոլոր տվյալների ճշտությունը (օրինակ՝ անունը և հասցեն) և ստորագրե՛ք փաստաթղթի դիմերեսի վրա հատկացված մասում՝ նախքան ավտոտրանսպորտային միջոցների վարչության ներկայացուցչի պատուհանից հեռանալը:
   - Եթե դուք ստանում եք միջանկյալ կամ ժամանակավոր վարորդական իրավունքի, ապա ձեզ հարկավոր չի լինի հանձնել տրանսպորտային միջոցի վարման թեստ:
   - Եթե դուք ստանում եք վարորդական թույլտվություն, ապա կարդացե՛ք այն ուշադիր, համոզվելու, որ դուք հասկանում եք կիրառվող վարորդական սահմանափակումները:

Ծանոթագրություն: Ժամանակավոր թույլտվությունը վավերական չէ, քանի դեռ չեք սկսել մեքենավարման դասընթացը և ձեր թույլտվությունը ստորագրված չէ հրահանգչի կողմից կամ չեք դարձել 17½ տարեկան:

6. Մեքենավարման քննության պատրաստություն
   - Նույնիսկ եթե դուք նախկինում վարել եք տրանսպորտային միջոց, ապա դա լավ գաղափար է մեքենավարման քննությունից առաջ հմտանալ վարելով: Լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս “Մեքենավարման քննության պատրաստություն” (*Preparing for Your Driving Test*, FFDL 22) “Արագ փաստեր” գրքույկը: Առևտրային վարորդներին անհրաժեշտ է պահանջները ստուգել Կալիֆորնիայի վարորդի առևտրային ձեռնարկում (*California Commercial Driver Handbook*):
   - Մեքենավարման թեստերը մատչելի են միայն գրանցումով: Երբ դուք պատրաստ եք գրանցվել, պլանավորե՛ք **dmv.ca.gov** կայքի միջոցով կամ զանգահարելով 1-800-777-0133:
   - Չե՞ք անցել: Մի՛ անհանգստացեք: Դուք կարող եք գրանցվել այս քայլը կրկնելու համար: Նորից հանձնելու համար, ժամանակավոր դիմորդները պետք է սպասեն 2 շաբաթ:
   - Վերահանձնելու վճարի (ների) համար ստուգե՛ք ավտոտրանսպորտային միջոցների վարչության կայքը: Եթե 3 փորձից հետո չեք անցնում վարորդական քննությունն, ապա դուք պետք է նորից սկսեք հայտի գործընթացը:
7. Ձեր վարորդական իրավունքի-ի ստացումը
   - Քննական գործընթացի հաջող ավարտից հետո, ձեզ կարող է տրամադրվել միջանկյալ կամ ժամանակավոր վարորդական իրավունքի մինչև 60 օր վավերականության ժամկետով: Դուք կարող եք վարել առանց ուղեկցող վարորդի մինչև ձեր միջանկյալ կամ ժամանակավոր վարորդական իրավունքի-ի վավերականության ժամկետի ավարտը:
   - Միջանկյալ վարորդական իրավունքի-ը ձեզ տրվում է թղթային տարբերակով, մինչև մշտական վարորդական իրավունքի-ի ուղարկումը:
   - Ժամանակավոր վարորդական իրավունքի-ը ձեզ տրվում է թղթային տարբերակով, քանի որ հայտը թերի է և սպասվում են լրացուցիչ տվյալներ կամ պահանջներ:
   - Եթե դուք չեք ստանում ձեր վարորդական իրավունքի քարտը 60 օրվա ընթացքում, զանգահարե՛ք 1-800-777-0133 կարգավիճակը ստուգելու համար:

Ծանոթագրություն: Վարման սահմանափակումների համար, վերանայե՛ք ձեր վարորդական իրավունքի-ի և Կալիֆորնիա նահանգի վարորդի ուղեցույցը կամ Կալիֆորնիայի վարորդի առևտրային ձեռնարկը (*California Commercial Driver Handbook*)